

# ՀՈԴՎԱԾՆԵՐ



## ԵՏՈՒՑՎԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Գ. Ա. ՂԱՐԻԲՅԱՆ, Ա. Ա. ԽԱՌԱՅՅԱՆ

Պլանայինից շուկայական տնտեսության անցման երկրներում իրականացվող վերափոխումների արդյունքներից մեկը հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխություններն են: Սակայն ետսոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքը ոչ միայն վերափոխումների արդյունք է, այլև նրա վրա ազդող էական գործոններից մեկը: Այսօր անցումային երկրներում սոցիալական շերտավորման գործընթացը, ներառելով հասարակության բոլոր շերտերը՝ անապաստաններից մինչև հարուստ և բարձր քաղաքական ընտրախավը, իր համապարփակության շնորհիվ ներգործում է վերափոխումների ընթացքի վրա: Սա կարևորում է այս գործընթացի բազմակողմանի հետազոտությունը:

Սոցիալական շերտավորումը բարդ հասկացություն է: Նկատի ունենալով, որ տնտեսագիտական գրականությունում տրվում են տարբեր սահմանումներ՝ և հաճախ նույնացվում «սոցիալական շերտավորում» և «տնտեսական շերտավորում» կատեգորիաները, նպատակահարմար ենք համարում նախ հստակեցնել այդ կատեգորիաների սոցիալ-տնտեսագիտական բովանդակությունը: Եթե «Սոցիալական շերտավորումը» սահմանենք որպես բնակչության հիմնական խմբերի հիերարխիկ կարգի կառուցվածքային տարբերակում՝ ըստ եկամտի և հարստության, կրթության և որակավորման մակարդակների, վարկի և իշխանության, ապա «տնտեսական շերտավորումը» կարելի է սահմանել որպես բնակչության տարբերակում՝ ըստ եկամտի և հարստության:

Մինչև 80-ականների կեսերը սոցիալիստական երկրներում սոցիալական շերտավորման մասին պատկերացումները հիմնվում էին որպես պաշտոնական վարկած ընդունված դասակարգային մոտեցման տեսության վրա, ըստ որի հասարակության սոցիալական տարբերակման հիմնական չափանիշ էին համարվում սեփականատիրական հարաբերությունները:

Հարկ է նշել, որ սոցիալիստական երկրների գիտնականների կողմից կատարվել են հասարակության սոցիալական տարբերակման վերլուծություններ՝ հիմք ընդունելով նաև այլ չափանիշներ: Այսպես, 60-ականներին հունգարացի գիտնականների (Ժ. Ֆեթգե) կողմից կիրառվել են աշխատանքի բնույթ, կառավարման համակարգում ունեցած տեղ և որակավորման մակարդակ չափանիշները, 80-ականներին՝ «կյանքի պայմաններ» չափանիշը (վերջինս ներառում է յոթ կարգավիճակային ցուցանիշ՝ սպառում, կուլտուրա, առևտրային հարաբերություններ, կացարան, բնակության վայր, ֆինանսական վիճակ, աշխատանքի բաժանում), որի հիման վրա առանձնացվել է 12 համեմատաբար համասեռ կարգավիճակային խումբ<sup>2</sup>: Տ. Կոլոշին հետազայում փորձել է վերլուծությունը կատարել

<sup>1</sup> St'u "Social structure and change: Finland and Poland comparative perspective". Ed. Allardt, E. A. Wesolovski. Warszawa, 1980, էջ 117, Ս. А. Сорокин, Человек. Цивилизация. Общество, М., 1992, էջ 302, 304, А. Е. Суринов, Доходы населения. Опыт количественных измерений, журнал "Финансы и статистика", М., №3, 2000, էջ 237:

<sup>2</sup> St'u "Stratification and inequality", Ed. R. Andorka, T. Kolosi, Budapest, 1984, 314 էջ:

այսպես կոչված «Լ-մոդելի» շրջանակներում, որում հորիզոնական առանցքում գտնվում են սեփականատիրական հարաբերությունները բնութագրող ցուցանիշները, իսկ ուղղահայացում՝ ըստ կյանքի պայմանների տարբերվող դասերի վիճակը: ԽՍՀՄ-ում հասարակության սոցիալական կառուցվածքը վերլուծվել է ըստ մասնագիտական-պաշտոնական, սոցիալական-աշխատանքային, ընտանեկան-տնտեսական, սոցիալ-տարածքային և էթնոդեմոգրաֆիական ենթակառուցվածքների համատեղ դիտարկման<sup>3</sup>:

Այնուհանդերձ, որոշիչը մնում էր «արտադրության միջոցների սեփականության ձև» չափանիշը, ըստ որի սոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքը ներկայացվում էր երկու դասակարգով (բանվորներ և գյուղացիություն) և մեկ խավով (մտավորականություն):

Ետսոցիալիստական երկրներում ներկայումս հասարակության նոր սոցիալական կառուցվածքին կատարվող անցումը ենթադրում է «սոցիալական ինքնորոշման» որոշակի փուլ: Սա անհրաժեշտություն է առաջացնում շերտավորման փոփոխությունները դիտարկել երկար ժամանակահատվածում՝ այն ուսումնասիրելով ոչ միայն վիճակագրական տվյալների, այլ նաև՝ սոցիալական շերտավորման մասին գոյություն ունեցող տեսությունների հիման վրա: Նկատի ունենալով, որ ուսումնասիրության առարկան պատմականորեն այնքան բացառիկ է, որ այն բնութագրելու համար դեռևս չի ծնվել որևէ համոզիչ տեսություն, դիմենք գոյություն ունեցող ստրատիֆիկացիոն տեսությունների օգնությանը:

Ստրատիֆիկացիոն տեսության դասական ուղղությունները երեքն են՝ մարքսիզմ, ֆունկցիոնալիզմ, վերերականություն:

Ըստ մարքսիզմի՝ դասակարգերի առանձնացման հիմնական չափանիշը սեփականատիրական հարաբերություններն են: Կապիտալիստական հասարակությունում դասակարգային հարաբերությունները շահագործման հարաբերություններ են, իսկ կապիտալի կուտակումը ուղեկցվում է հասարակության բևեռացմամբ: Սոցիալիստական հասարակարգում «պրոլետարիատի դիկտատուրան» անհրաժեշտ աստիճան է «անդասակարգ հասարակարգի» անցման համար:

Ետսոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքը վերլուծելիս մենք չենք կարող հիմք ընդունել մարքսիզմը հետևյալ պատճառներով. ա) այսօր սեփականությունը կորցրել է դասակարգերի հակադրման հիմքի իր դերը, դասակարգային հարաբերությունները շատ ավելի բարդ են շահագործման հարաբերությունների տեսանկյունից քննարկվելու համար, աշխատավորների որոշակի խումբ մի կողմից «վաճառում է իր աշխատուժը», մյուս կողմից «շահագործվում է», արհմիության գործունեության շնորհիվ աշխատանքի շուկայում այլ խմբերի հանդեպ հանդես է գալիս մենաշնորհյալի դերում, բ) վիճակագրական տվյալների վերլուծությունը առաջատար երկրներում փաստում է ոչ թե սոցիալական և տնտեսական բևեռացման, այլ միջին դասի ընդլայնման մասին, իսկ անդասակարգ հասարակություն կառուցելու գաղափարը գործնականում իրագործելու փորձը հանգեցրեց ծանր հետևանքների: Մարքսը մարդու պատկանելությունը սոցիալական խմբին համարում է դժվար փոխելի, սոցիալական մոբիլությունը՝ կոլեկտիվ, մինչդեռ արմատական կառուցվածքային վերափոխումներ պարող անցումային տնտեսությամբ հասարակությունում սոցիալական մոբիլությունը բավականին ինտենսիվ է ընթանում, ընդ որում, վարընթաց մոբիլությունը ունի կոլեկտիվ, վերընթաց՝ անհատական բնույթ:

Անցումային տնտեսության սոցիալական կառուցվածքը վերլուծելիս ֆունկցիոնալիստական տեսության կիրառումը ևս արդյունավետ չի կարող լինել: Ըստ այս տեսության՝ սոցիալական տարբերակումը ֆունկցիոնալ անհրաժեշտություն

<sup>3</sup> Տե՛ս Թ. Ի. Заславская, Р. В. Рывкина, Социология экономической жизни: очерки теории, Новосибирск, 1991, էջ 407:

է, քանի որ հասարակության մեջ կատարում է խթանման և սոցիալական վերահսկման ֆունկցիա, սոցիալական մոբիլության հետ մեկտեղ այն հասարակությանը հնարավորություն է տալիս հասնել հասարակական օրգանիզմի ֆունկցիոնալության: Ամհատները գրավում են տարբեր սոցիալ-մասնագիտական դիրքեր, դասակարգը մասնագիտական խումբ է, իսկ ֆունկցիոնալիստական ստրատիֆիկացիոն սխեման ընդունում է երկար և անընդհատ կարգավիճակային ասանդակի տեսք<sup>4</sup>:

Անցումային տնտեսությունում սոցիալ-մասնագիտական դիրքորոշումները չեն կարող սոցիալական կառուցվածքի գնահատման չափանիշ հանդիսանալ, քանի որ կրթության, մասնագիտական-որակավորման առկայությունը չի ապահովում ոչ համապատասխան վարկ, ոչ էլ՝ վաստակ. սոցիալ-մասնագիտական դիրքորոշումների կարգը շատ արագ փոխվում է. հասարակությունում մեծաշնորհ արտոնությունների գերիշխման շնորհիվ լավագույն տեղերի համար իրական մրցակցություն տեղի չի ունենում, այն սահմանափակվում է կարգավիճակային խմբերի համեմատաբար փակ լինելով:

Սոցիալական շերտավորման դասական տեսություններից երրորդը վերերականությունն է, ըստ որի ցանկացած շերտավորման հիմքում ընկած է իշխանության և հեղինակության բաշխումը. շեշտը դրվում է ձևավորվող կառուցվածքի վրա, «դասակարգ», «կարգավիճակ», «կուսակցություն» հասկացություններով նշանակվում են տնտեսական, սոցիոմշակութային և քաղաքական շերտավորումների երեք համեմատաբար ինքնուրույն հարթություններ. որոշակի դասակարգին պատկանելը որոշվում է արդյունքների և աշխատանքի շուկայում ունեցած «կյանքի հնարավորություններով» (շուկայական դիրքով), որոնք արտահայտվում են կուտակված բարիքների ծավալով և ընթացիկ եկամուտ ստանալու հնարավորությամբ, տարբեր ռեսուրսների առկայությամբ<sup>5</sup>:

Մեր կարծիքով, անցումային տնտեսության սոցիալական վերափոխումները վերլուծելիս անհրաժեշտ է ընտրել վերերյան մոտեցումը, քանի որ վերերյան մեթոդոլոգիան համապատասխանում է ձևավորվող սոցիալական կառուցվածքին, որտեղ հին սոցիալական կապերը խզվում են, իսկ նորերը դեռևս գտնվում են ձևավորման գործընթացում: Մ. Վերերի անհավասարության և մոբիլության փոխլրացման մասին տեսական դրույթը, ըստ որի ընտրախափի և ստորին դասակարգերի միջև անհատների և ամբողջ ընտանիքների «շրջանառությունը» անհրաժեշտ է յուրաքանչյուր իշխող դասի անընդհատ գործելու և կայունության համար, օգտակար կարող է լինել ետսոցիալիստական հասարակության մի շարք հիմնախնդիրներ վերլուծելիս. վերերյան մեթոդոլոգիան հնարավորություն է տալիս ուշադրությունը կենտրոնացնել անհատական սոցիալական ազենտների վրա, այլ ոչ թե ամբողջական սոցիալական կառուցվածքի (ինչպես մարքսյան մեթոդոլոգիայում է):

Այսօր ետսոցիալիստական բնակչությունը, չունենալով բարեկեցության հասնելու հիմնավորված և երաշխավորված ռազմավարություն (ինչպիսին, օրինակ, մասնագիտական առաջխաղացումն է), փորձում է առավելագույնի հասցնել ստացվելիք եկամուտը կամ օգտակարությունը, նվազագույնի՝ ռիսկերը՝ մշակելով իր «սեփական ռազմավարությունը»: Տնային տնտեսությունների ռազմավարությունների կոնկրետ տեսակները՝ «կյանքի հնարավորությունները», անհատական ռազմավարությունների արդյունքում ծնում են նոր հարաբերություններ, որոնք, համեմատաբար կայուն բնույթ ձեռք բերելով, ձևավորում են հասարակության

<sup>4</sup> St'u K. Davis, W. Moore, Some Principles of Stratification. The American Sociological Review, 1945, № 2, էջ 243, 244:

<sup>5</sup> St'u M. Weber, On charisma and institutional building, Chicago, London: Univ. of Chicago Press, 1968, էջ 169-183:

սոցիալական կառուցվածքը: Այսպիսով, ռազմավարությունները միավորում են անհատական ազենտների միկրոմակարդակը սոցիալական կառուցվածքի մակրոմակարդակի հետ:

Փորձենք ներկայացնել ետսոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքը:

Սոցիալական խմբերի և դասերի տարբերակումը միշտ էլ առավել կամ պակաս աղոտ է եղել նրանց սահմանազատման բավականին ստույգ չափանիշների բացակայության պատճառով: Չափանիշների ընտրությունը անցումային տնտեսությամբ երկրներում բարդանում է նրանով, որ արագ փոփոխությունների պայմաններում տնտեսական տարբերակումը պայմանավորող գործոններն ավելի անորոշ են դառնում: Այնուհանդերձ, անհրաժեշտություն է առաջանում ներկայացնել գոնե թիմնական համընդհանուր ճանաչում գտած չափանիշները, այլապես շերտավորման վերլուծության խնդիրը անլուծելի կլինի:

Տարբեր չափանիշների՝ եկամտի, մասնագիտության, իշխանության, էթնիկ, կրոնական պատկանելության, կրթական մակարդակի, աշխատանքի կազմակերպման մեջ ունեցած դերի, կյանքի ստանդարտի, մշակութային բարիքների սպառման, վարկի և այլն հիման վրա սոցիալական կարգավիճակների դասդասման ոչ քիչ փորձեր են կատարվել<sup>6</sup>:

Կարծում ենք, անհրաժեշտ է ընդունել Պ. Ա. Սորոկինի և Մ. Վեբերի հայեցակարգերում առաջարկված շերտավորման երեք տեսակների (տնտեսական, քաղաքական և մասնագիտական կամ սոցիոմշակութային) տարբերակման գաղափարը, որը կազմում է սոցիալական շերտավորումը: Շերտավորման այս տեսակներից ոչ մեկը սպառիչ չի կարող ներկայացնել անհատի սոցիալական կարգավիճակը (նրա մասնագիտական կարգավիճակը կարող է բարձր լինել, սակայն տնտեսականը՝ ցածր, կամ միևնույն տնտեսական կարգավիճակի դեպքում մարդիկ կարող են ունենալ տարբեր քաղաքական և մասնագիտական կարգավիճակներ): «Դասակարգ» կամ «դաս» հասկացությունը կապելով հասարակության տրնտեսական շերտավորման հետ՝ մենք առաջարկում ենք անհատի դասակարգային կարգավիճակի էմպիրիկ չափման մոտեցման մեր տարբերակը՝ իհարկե չհավակնելով այն համարել օպտիմալ: Կարծում ենք՝ դասակարգային տարբերակման չափանիշներ կարելի է համարել հարստության չափը (զուտ ֆինանսական պահանջների և նյութական սեփականության տիրապետումը), շուկայում պահանջարկ վայելող անհրաժեշտ ունակությունների կամ որակավորման առկայությունը, տնտեսական ռեսուրսների տնօրինումը (զբաղեցրած պաշտոնը), ընթացիկ եկամտի չափը, սպառողական ծախսերի ծավալը և կառուցվածքը: Այս չափանիշներից կենտրոնականը ընթացիկ եկամտի չափն է, որի հետ կոռելացված են մյուս երեք չափանիշները:

Վերը թվարկված չափանիշների միաժամանակյա դիտարկման հիման վրա ետսոցիալիստական հասարակության սոցիալական կառուցվածքում, մեր կարծիքով, կարելի է առանձնացնել հետևյալ ձևավորվող դասերը՝ հարուստներ (իշխող դաս), ունևորներ, միջին դաս (տարբերակված ըստ վերին, միջին և ստորին միջին դասերի), աղքատներ (ներառյալ սոցիալական հատակը): Հարուստների դասը վերը թվարկված չորս չափանիշով էլ ետսոցիալիստական երկրներում գրավում է ամենաբարձր դիրքը՝ թվաքանակով չգերազանցելով բնակչության 5-10 -ը:

<sup>6</sup> Տե՛ս «Dictionary of sociology». London: Penguin Books, 1988, **Б. Барбер**, Структура социальной стратификации и тенденции социальной мобильности. Американская социология, М., 1972, **В. Ф. Анулин**, Проблема эмпирического измерения социальной стратификации и социальной мобильности, СОЦИС, М., 1993, № 4, էջ 87-96, **А. Е. Суринов**, Доходы населения..., էջ 237, «Social structure and change...», էջ 117:

Անցումային հասարակության մեջ, որտեղ դեռևս հասարակական թատերաբեմում բացակայում են վարքի համընդհանուր ճանաչում գտած կանոններն ու ստանդարտները, հասարակության զարգացման հետագիծը որոշելու տեսակետից ամենամեծ դերը խաղում է իշխող դասը (ընտրախավի այն մասը, որը մասնակից է երկրի համար կարևորագույն տնտեսական և քաղաքական որոշումների ընդունմանը՝ տնտեսության վրա էապես ազդող քաղաքագետները, խոշոր ձեռներեցները՝ և այլն): Իշխող դասակարգի վարքից է կախված ինչպես վերափոխումների ընթացքը, սոցիալական լարվածության մեղմացմանն ուղղված արդյունավետ սոցիալական քաղաքականության իրագործումը, այնպես էլ նոր սպառողական ստանդարտները (որոնք կյանքի ուղեմիջ են դառնում նաև մյուս խմբերի համար): Նոր իշխող դասը հարաբերականորեն փակ է, կողմնորոշված դեպի փոխհարաբերությունները հիմնականում «իր» միջավայրում: Այդ խումբ թռիչք գործելու հարցում էական դեր է խաղում ինչպես անձնական կապերի սկզբունքը, այնպես էլ արյունակցական տիպի հովանավորչության սոցիալական էֆեկտը:

Ունևորների դասի տեսակարար կշիռն ընտանիքների ընդհանուր թվաքանակում ևս մեծ չէ (մեր կարծիքով, հիմնականում 9-րդ դեցիլային խումբը և 10-րդի մի մասը): Այս դասի միջուկը կազմում են խոշոր ձեռներեցները և բարձրաստիճան որոշ պաշտոնյաներ:

Ետսոցիալիստական միջին դասի ստեղծումը կարևորվում է երկրի տնտեսական և քաղաքական կայունության ամրապնդման տեսակետից: Նրա կազմի մեջ մտնում են հասարակության այն խավերը, որոնք ունակ են ապահովելու ինտելեկտը, ռեսուրսները և կառավարումը հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտների միջին և անգամ ցածր մակարդակի վրա: Ուստի «միջին դաս» կատեգորիան սոցիալապես ոչ համասեռ է. առանձնացվում են այնպիսի կարգավիճակային խմբեր, ինչպիսիք են «վերին միջին դասը», «միջին միջին դասը», «ստորին միջին դասը»:

Սոցիալ-տնտեսագիտական գրականության մեջ վերջին տարիներին երևան են եկել ետսոցիալիստական երկրներում այս դասի ձևավորմանը վերաբերող մի շարք աշխատանքներ<sup>7</sup>: Եթե միջին դասի դերի կարևորության հարցում տարածայնություններ չկան, ապա բնակչության կազմում միջին դասի տեսակարար կշռի հարցում կարծիքները բաժանվում են: Բնականաբար, միջին դասի ձևավորված լինելու կամ չլինելու հարցը ամբողջությամբ կախված է գնահատման չափանիշի ընտրությունից: Իսկ առաջարկվող չափանիշները տարբեր են. այսպես՝ միջին դասը միավորում է այն մարդկանց, ովքեր՝ 1. ունեն տվյալ հասարակության համար միջին ընթացիկ եկամուտների մակարդակ, 2. ունեն «ստանդարտ» ունեցվածքային հավաքածու, 3. ունեն արտադրության միջոցների մանր սեփականություն («հին միջին դաս»), 4. ունեն ինտելեկտուալ սեփականություն՝ բարձրագույն կրթությամբ մասնագետներ («նոր միջին դաս»), 5. զբաղվում են մտավոր աշխատանքով. այս դեպքում միջին խավին սկսում են վերագրել նաև «սպիտակ օձիքավորներին», բարձրագույն կրթություն չունեցող ծառայողներին («ստորին միջին դաս»), 6. հասարակության էլիտար և ստորին խավերին հակադրվում են իրենց կյանքի ռոճով և սոցիալական կապերով, իրենց գործողություններում անհատականության և ինքնուրույնության աստիճանով (վերը թվարկված մասնագիտական և տնտեսական պարամետրերի հետ մեկտեղ), 7. հենց իրենց՝ հարցվողների կողմից են սուբյեկտիվորեն դասվում միջին դասին (ըստ վարկի մակարդակի):

Կարծում ենք, որ վերը թվարկված յուրաքանչյուր չափանիշ առանձին վերցրած չի կարող լիարժեք բնութագրել այս «խալտաբղետ» դասը: Այսպես, սեփականության առկայությունը «միջին դասի» բնութագրիչներից է: Սակայն այսօր

<sup>7</sup> St'u B. Радаев, О. Шкаратан, Социальная стратификация, М., 1996, А. Ситников, Формируется ли средний класс? "Российский экономический журнал", М., 1999, № 3, էջ 26-35:

ետսոցհայիստական երկրներում մանր բաժնետերերը հիմնականում միայն անվանական սեփականատերեր են (իրենց սեփականության իրավունքը նրանք չեն կարող իրացնել ոչ շահաբաժին ստանալու, ոչ ձեռնարկությունների կառավարմանը մասնակցելու իմաստով), առկա է փաստացի և իրավական սեփականատերերի չհամընկնելը, արտադրական ներուժի ոչ արդյունավետ օգտագործումը, կապիտալի արտահոսքը և այլն:

Միջին դասին վերագրելու չափանիշներից է կրթական մակարդակը:

Ետսոցհայիստական երկրներում գիտելիքները չեն երաշխավորում դրանց տերերին մուտք «նոր միջին դաս» համապատասխան եկամուտներով և սպառմամբ: Այդ իրավիճակը «ուղեղների արտահոսքի», ոչ հեռանկարային արտադրություններից որակյալ աշխատողների բազմաքանակ դասի հեռացման, բարձրորակ մասնագետների ապամասնագիտացման պատճառ է դառնում:

Միջին եկամտի հիման վրա միջին դասի գնահատումը ևս պրոբլեմների հետ է կապված: Տնտեսագիտական հետազոտություններում միջին դասին երբեմն վերագրում են այն մարդկանց խումբը, որոնք ըստ եկամուտների համադրելի են արևմտյան «միջին դասի» հետ: Պարզ է, որ ետսոցհայիստական երկրների պոտենցիալ միջին դասի եկամուտները զգալիորեն զիջում են արևմտյան միջին դասի եկամուտներին: Կարծում ենք, միջին դասը ըստ եկամուտների գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ երկրի տնտեսության իրողությունը (բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվող ՀՆԱ-ն և այլն): Սակայն ծագում են նոր հարցեր՝ կարելի՞ է միջին շնչային եկամտի և կենսամիճմուսի կրկնակի հարաբերակցությունը համարել միջին դասը առանձնացնելու ստորին սահման. եթե այո՞, ապա եկամուտների ո՞ր մակարդակից է սկսվում բարձր դասի սահմանագատումը և այլն:

Ինքնահիդենտիֆիկացիայի չափանիշի դեպքում ևս ծագում են լուրջ հիմնահարցեր: Այսպես, իրենց սոցիալական կարգավիճակի սուբյեկտիվ գնահատման ժամանակ հարցվողների որոշակի մասը իրեն դասել է միջին դասին, չնայած անհատական ամսական եկամուտները գերազանցել են 1000 դոլարը: Պատճառը, կարծում ենք, թաքնված է հոգեբանական, սոցիալական կորուստների մեջ. «նոր միջին դասի» ներկայացուցիչները աշխատանքային առաջխաղացման հնարավորությունները արգելապատված են տեսնում, մրցակցությունը գործատուներին հնարավորություն է տալիս հեշտությամբ հեռացվածների փոխարինողներ գտնել, իսկ հարկային մեծ բեռը ստիպում է «հին միջին դասի» ներկայացուցիչներին տնտեսական գործունեությամբ զբաղվել կիսալեզալ կամ անլեզալ, որից ստացվող եկամուտը նրան հնարավորություն չի տալիս իրագործել միջին դասի համար ավանդական սոցիալական ֆունկցիաները:

Տարբեր ետսոցհայիստական երկրներում տարբեր գնահատումներով միջին դասը կազմում է բնակչության 20-35 տոկոսը: Նկատի ունենալով այն փաստը, որ այսօր ետարդյունաբերական զարգացման փուլին հասած արևմտյան երկրները դարձել են համեմատաբար համասեռ «միջին դասի հասարակություն» (միաժամանակ, նման հասարակությունը մնում է ծայրահեղ տարբերակված), որտեղ միջին դասը կազմում է բնակչության 60-80 տոկոսը, պետք է ընդունենք, որ ետսոցհայիստական երկրներում դրվել է միջին դասի միայն հիմքը: Այս դասը չի կարող լիարժեք կատարել իր հիմնական ֆունկցիաները՝ դառնալ երկրի հիմնական հարկային դոմորը, ներքին ներդրողը և քաղաքական կյանքը կայունացնողը:

Ետսոցհայիստական բնակչության մեծ մասը (շուրջ կեսը) իր կենսամակարդակով կազմում է աղքատների դասը: Ընդ որում, ետսոցհայիստական աղքատները տարբերվում են կենսագործունեության հատուկ ռեժիմով, հասարակության բարիքների հասանելիության համարյա բացակայությամբ: Աղքատությունն իր կազմով միատարր չէ: Ժայռահեղ աղքատ ընտանիքներում մեկ շնչի հաշվով

փաստացի ընթացիկ ծախսերը ցածր են նվազագույն պարենային զանբյուրի արժեքից: Վարընթաց սոցիալական մոբիլության արդյունքում ձևավորվել է «սոցիալական հատակը», որը ներառում է մուրացկաններին, կացարանից զրկվածներին (անտուններին), անապաստան երեխաներին և այլն: Բնակչության այս խմբերը առկա էին նաև սոցիալիստական հասարակարգում, սակայն երևույթի մասշտաբները այլ էին, բացի այդ՝ իշխանությունները ձգտում էին դրանք նվազագույնի հասցնել: Ներկայումս «սոցիալական հատակում» հայտնված խմբերը նորմալ կյանքի վերադառնալու փոքր հնարավորություն ունեն:

Ստրատիֆիկացիոն տեսություններում կարևորվում են հասարակության տնտեսական շերտավորման սանդղակի և պրոֆիլի փոփոխություններին առընչվող հարցերը: Այստեղ առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում Վ. Պարետոյի, Կ. Մարքսի և Պ. Սորոկինի տեսակետները: Պարետոյի վարկածի էությունը այն է, որ տնտեսական շերտավորման պրոֆիլը կամ եկամտի բաշխման հաճախականությունը հաստատում է: Ըստ Կ. Մարքսի՝ եվրոպական երկրներում տեղի էր ունենում խորացող տնտեսական տարբերակման գործընթաց դասակարգային շահերի չլուծվող հակամարտությամբ և տնտեսական շերտավորման սանդղակի և պրոֆիլի փոփոխությունը գործնականում ունի անսահման բնույթ:

Պ. Սորոկինը առաջ է քաշել տնտեսական շերտավորման չուղղորդված տատանումների և ցիկլերի տեսությունը: Տնտեսական պատմությունը հաստատում է Պ. Սորոկինի տեսության այնպիսի պնդումների ճշմարտացիությունը, ինչպիսիք են տնտեսական շերտավորման սանդղակի պրոֆիլի անսահման աճի կամ նվազման դեպքում «հագեցման» կետի գոյությունը, ինտենսիվ տնտեսական զարգացման ժամանակաշրջանի ու տնտեսական շերտավորման աճի միջև նշանակալի կոռելյացիոն կապի առկայությունը: Սորոկինը այն կարծիքն է հայտնում, որ «ցանկացած հասարակությունում ցանկացած ժամանակ պայքար է ընթանում շերտավորման ուժերի և հավասարեցման ուժերի միջև, առաջինները անընդհատ են աշխատում, երկրորդները՝ տարերային, իմպուլսիվ՝ օգտագործելով ուժային մեթոդներ»<sup>8</sup>:

Ետսոցիալիստական հասարակության տնտեսական բուրգի բարձրության աճը «ուժային մեթոդներով»՝ հարկերի և տրանսֆերտների միջոցով, իսկապես կարելի է որոշակիորեն կասեցնել: Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ երկու հանգամանք, մախ՝ անցումային տնտեսությունում հասուն շուկայական տրնտեսության համեմատությամբ ավելի ցածր է և՛ պրոգրեսիվ հարկման հավասարեցնող էֆեկտը (հարկային քաղաքականության անկայունության, իրավական դաշտի անկատարության պատճառով), և՛ տրանսֆերտային վճարների հավասարեցնող էֆեկտը (մի կողմից՝ կառավարության միջոցների տղության և մյուս կողմից՝ կարիքավոր բնակչության ստվար զանգվածի առկայության պատճառով), երկրորդ, վերաբաշխման ոլորտում իրականացվելիք կտրուկ քայլերը կարող են բարձրացնել եկամտի վերաբաշխման զինը. ունևորների աշխատելու, խնայողություններ կատարելու և ռիսկի դիմելու ազդակների շլատումը, չքավորների՝ աշխատելու եռանդի նվազումը, վերաբաշխման «ծակ շերտիփից» առաջացող արտահոսքը (հարուստից աղքատին փոխանցվող եկամտի մի մասը կորչում է վատնված ջանքերի կամ վարչական ծախսերի տեսքով), և այս բոլորի արդյունքում՝ տնտեսության արդյունավետության կորուստը:

Կարծում ենք, ետսոցիալիստական երկրներից շատերին բնորոշ մեծ անհավասարությունը մեղմելու լավագույն տարբերակը համալիր միջոցառումների կիրառումն է, եկամտուների վերաբաշխման քաղաքականության զուգակցումը մարդկային կապիտալում ներդրումների իրականացման, լայնածավալ, զբաղվածությանը նպաստող, տնտեսական աճին միտված տնտեսական քաղաքականության հետ:

<sup>8</sup> Տե՛ս Ս. Ա. Сорокин, Человек. Цивилизация. Общество, М., 1992, էջ 309:

**Г. А. ГАРИБЯН, А. А. ХАРАТЯН - Методологические подходы к изучению социальной структуры постсоциалистического общества.** - Изменения социальной структуры общества являются частью перемен в странах, переходящих от плавной экономики к рыночной. Однако социальная структура постсоциалистического общества является не только следствием этих перемен, но и одним из существенных факторов, действующих на сами перемены. Это обуславливает важность всестороннего анализа данного процесса.

При анализе социальных перемен переходной экономики авторы пользовались в основном веберовской методологией, так как она наилучшим образом характеризует образовавшиеся социальные структуры.

Предложен вариант эмпирического измерения классовой принадлежности личности на основе следующих критериев: мера богатства; наличие необходимых умений или квалификаций, имеющих спрос на рынке; владение экономическими ресурсами (занимаемая должность); мера текущего дохода; объем и структура расходов домашних хозяйств.

На основе указанных критериев в социальной структуре постсоциалистического общества выделены следующие формирующиеся слои: богатые (властвующий класс), имущие (средний класс), бедные (включая социальное дно). Даны характеристики и оценки каждого из них.